

ներէն եւ Վատերջօն անոնց համար ազգային սուգ մը նկատուեցաւ:

Հրէաներու ազատագրութիւնն ալ Փրանսական յեղափոխութեան յառաջ բերած վերանորոգումներէն մէկն էր եւ խորթ աչքով կը դիտուէր Սրբազան Դաշնակցութեան անդամներէն եւ առհասարակ բոլոր կղերամիտ եւ յետադիմական տարրերու կողմէ:

Գերմանիոյ մէջ մանաւանդ հակասեմականութիւնն արծարծուեցաւ նոր թափով մը եւ մինչեւ իսկ Շլէզլ պահանջեց հաւատարմական ատենաներու վերահաստատումը: Մինչեւ անգամ սահմանափակեցին հրէաներու ամուսնութեան հրամանագրերը, որպէսզի «խողերու նման չբաղմանան»... Գոնէ այս ստորնացումը խնայած են մեզ թուրքերը, թէեւ աւելի վայրի ձեւ մըն է թողուլ որ աճին եւ յետոյ կոտորել թէ՛ ծնողքն եւ թէ՛ զաւակները...

Ֆրանսայի մէջ Լուզովիկոս ԺԶ եւ այնուհետեւ Լուզովիկոս ԺԸ շարունակեցին Յեղափոխութեան քաղաքականութիւնը հրէաներու նկատմամբ եւ ջնջեցին խորական օրէնքներու վերջին մնացորդները Ալգասի նահանգին մէջ: Այսպէս՝ Ֆրանսան եղաւ օրրանը հրէական ազատագրութեան, զոր լրացուց 1848-ի Յեղափոխութիւնը:

Հետզհետէ Անգլիա, Աւստրիա եւ Իտալիա հետեւեցան Ֆրանսայի օրինակին եւ ջնջեցին հրէաները կապող սեղմիչ օրէնքները:

Եւ ի պատիւ Եւրոպային պէտք է ըսել, թէ ան ի փոխարէն այս ազատութեան իրաւունքին ոչ մի դիմում չպահանջեց հրէաներէն: Ան թողուց, որ ժամանակն ու դատարարականութիւնը ջնջեն այն տարբերութիւններն որ քսան դարերէ հետէ իրարու դէմ հանած էին հրէան ու քրիստոնեան:

Լուսամիտ հրէաներն ալ իրենց կողմէ աշխատեցան բարեփոխել կրօնը, վտարելով անկէ ծէսերն ու աւելորդապաշտութիւնը եւ մէջտեղ եկաւ տեսակ մը հրէական բողոքականութիւն: Համբուրգի, Բեռլինի եւ Վիեննայի մէջ հիմնւեցան ընկերութիւններ վերանորոգեալ հրէայ կրօնը տարածելու համար: Թալմուտը վտարեցին, թրիստութիւնը ջնջեցին, չարաթօրը սուրբ պահելն անկարելիոր համարեցին եւ այլն եւ ապահովարար պիտի յաջողէին, եթէ

չափազանցութեան չհասնէին վերանորոգումը, ինչ որ պատճառ եղաւ հակազդեցիկ շարժման մը եւ պատրուակ տուաւ մոլեռանդ բարբիներուն՝ բանազրկելու ամէն անոնք, որ կը հետեւէին նոր ազանդին:

Շատ մը լուսամիտ հրէաներ զուեցան իրենց կրօնակիցներու այս հակափրոփականդէն եւ ակամայ քրիստոնէութիւն ընդունեցին, ազատօրէն իրենց զաղափարներն յայտնել կարողանալու համար: Հայնրիխ Հայնէ մեծանուն բանաստեղծն անգամ, որ իր սրտին խորէն հաւատարիմ էր հին կրօնքի էական սկզբունքներուն, միկրուեցաւ, որպէսզի տգէտ մոլեռանդներու կարգը չդատուի եւ Հիոբանցի իր ժողովրդականութիւնը:

ԱՐԵՒԵԼՔԻ ՀՐԷԱՆԵՐԸ

Բայց մինչդեռ արեւմտեան Եւրոպայի մէջ հրէութիւնն այսպէս կը ձեռքադառուէր թէ՛ զինքը խեղդող արտաքին կապանքներէն եւ թէ՛ իր միտքը կաշկանդող կրօնական նախապաշարումներէն, Լեհաստանի եւ Ռուսիոյ մէջ բնակող հրէայ ահագին զանգուածը կ'ապրէր ամենադաժան օրեր: Քանի մը միլիոն հրէաներ ժ.Դ դարէն սկսեալ Գերմանիայէն զաղթած էին այն կողմերը, իբր հետեւանք սոսկալի ժանտախտի մը, որուն պատճառ նկատուած էին անոնք քրիստոնեայ ամբոխին կողմէ: Լեհ իշխանները նախապէս լաւ ընդունելութիւն բրած էին անոնց, որովհետեւ իրենց ժողովուրդը կը բազկանար միայն երկու դասակարգէ, ազնուական եւ ստրուկ, եւ հրէաները կը կողմէին վաճառական դասը, որուն պէտքը զգալի էր յաճախ:

Ժէ դարուն, երեսնամեայ պատերազմի ժամանակ ուրիշ շատ մը հրէաներ ալ Գերմանիայէն անցան Լեհաստան, ուր իրենց կրօնակիցները կ'ապրէին համեմատաբար աւելի նըպաստաւոր պայմաններու մէջ:

Բայց երկար շտեւեց անոնց այդ համեմատական բարօրութեան շրջանը: Բողոքականութեան դէմ մարտնչելու համար՝ Հոլով կաթոլիկ Լեհաստանի մէջ բազմացուցած էր կղերական միաբանութիւնները եւ ասոնցմէ մասնաւորապէս ձեղուիթները սոսկալի ու ունէին